ՀՀ գիտության կոմիտեի 2021 թվականի գործունեության ամփոփ հաշվետվություն

2021 թ. ընթացքում ՀՀ գիտության կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե) իր գործունեությունն իրականացրել է հետևյալ ուղղություններով.

1. Իրավական ակտերի մշակում և ոլորտի բարեփոխումներ

1.1. ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 747-Լ որոշմամբ փոփոխություններ են կատարվել Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման կարգում: Նոր կարգով 2022 թ. հունվարի 1-ից սկսած՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական կազմակերպությունների գիտական կադրերի պաշտոնային դրույքաչափի նվազագույն չափի հաշվարկի համար որպես բազային աշխատավարձ սահմանվել է 66 140 դրամը: Յուրաքանչյուր տարակարգի պաշտոնային աշխատավարձի նվազագույն չափը հաշվարկվելու է կարգի հավելվածով նախատեսված աղյուսակով՝ տվյալ տարվա համար սահմանված գործակցի և բազային աշխատավարձի արտադրյալով: Որոշման արդյունքում 2022 թ. հունվարի 1-ից սկսած՝ մինչև 2025 թվականը գիտաշխատողների բազային աշխատավարձն զգալիորեն կբարձրանա:

1.2. ՀՀ կառավարության 2021 թ. ապրիլի 8-ի N 524-Ն որոշմամբ 2021 թ. պետական բյուջեով նախատեսված գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագրի միջոցառումների իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցներն ավելացել են 2 784 565 400 ՀՀ դրամով: 2021 թվականին բյուջեից հատկացված լրացուցիչ միջոցների շնորհիվ Գիտության կոմիտեն փոփոխություններ է կատարել թեմատիկ ծրագրերի մրցույթներում, կազմակերպել է մի շարք նոր մրցույթներ, այդ թվում՝ գիտական ենթակառուցվածքի արդիականացման ծրագրեր, մասնավորապես՝

- Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար անցկացված մրցույթով գիտական կազմակերպություններին տրամադրվել է աննախադեպ մեծ՝ 1 միլիարդ 354 միլիոն ՀՀ դրամի աջակցություն՝ սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար: Մրցույթի շահառու են դարձել ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրում ընդգրկված 15 կազմակերպություններ, որոնց տրամադրվել է ընդհանուր առմամբ 1 միլիարդ 354 միլիոն ՀՀ դրամի աջակցություն՝ 28 հայտով ներկայացված սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար: Ծրագրի կարևոր նախապայմաններից է տարբեր շահագրգիռ կազմակերպությունների կողմից սարքի համատեղ օգտագործման հնարավորությունը:
- 2021 թ. գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի շրջանակներում ֆինանսավորման են երաշխավորվել աննախադեպ մեծ թվով՝ 224 գիտական թեմաներ՝ 12-ից մինչև 36 ամիս տևողությամբ: Ավելացվել է թեմատիկ ֆինանսավորման թեմաների քանակը, տևողությունը, խմբում ընդգրկված անդամների թիվը: Սահմանվել են թեմայի ավարտին պահանջվող վերջնարդյունքներ:

- Կազմակերպվել է Գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ, որի արդյունքում ֆինանսավորման է երաշխավորվել 16 ծրագիր: Մրցույթի նպատակն է աջակցել նոր գիտական խմբերի և լաբորատորիաների ստեղծմանը, ինչպես նաև նպաստել արդեն գործող գիտական լաբորատորիաների կամ բաժինների ամրապնդմանը: Դրամաշնորհները տրամադրվել են 36 ամիս տևողությամբ, 4-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի ղեկավարների նախաձեռնությամբ ներկայացված և մրցութային կարգով ընտրված հավակնոտ և բեկումնային թեմաներին: Խմբերի ղեկավարները մինչև 40 տարեկան գիտնականներ են, որոնք համապատասխանում են առաջատար հետազոտողի (Principal investigator, PI) միջազգային չափանիշներին և ներկայացրել են հավակնոտ և մրցունակ ծրագիր:
- Առաջին անգամ կազմակերպվել է Առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ, որն ուղղված է ՀՀ-ում իրականացվող միջազգային մրցունակ գիտական ուղղությունների (դպրոցների) պահպանմանն ու զարգացմանը: Ծրագրի նպատակն է ՀՀ-ում գործող միջազգային չափանիշներով առաջատար գիտաշխատողների ղեկավարությամբ հետազոտական խմբերի ձևավորումը: Ծրագրի իրականացման պարտադիր պահանջներն են՝ հավակնոտ և բեկումնային թեմայով հետազոտական ծրագրերը, արտերկրի հեղինակավոր գիտական հանդիսացող գործընկերոջ առկայությունը, միջազգային հեղինակավոր ամսագրերում հրապարակումները, միջազգային հետազոտական դրամաշնորհների ներգրավումը: Մրցույթի արդյունքում ձևավորվել է 6-7 հոգանոց 49 գիտական խումբ: Սա աննախադեպ ծրագիր է, որի 5 տարվա ֆինանսավորման գումարը կազմում է 156 մլն ՀՀ դրամ: Արդյունքում նախատեսվում է ունենալ գիտական «դպրոցի» պահպանում, զարգացում և փոխանցում, բարձր որակավորում ունեցող առնվազն 150 երիտասարդ գիտաշխատող, գործընկերոջ հետ համատեղ աշխատանքներ, փորձի փոխանակում և կապերի ընդլայնում, առնվազն 200 Ք1 կամ Ք2 պարբերականներում տպագրություններ:
- Անցկացվել է Կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված արտահերթ մրցույթ՝ նոր պայմաններով: Ծրագրի համաֆինանսավորող են հանդիսանում հայաստանյան և օտարերկրյա ընկերություններ, որոնք հետաքրքրված են ակնկալվող արդյունքի կիրառությամբ: Յուրաքանչյուր ծրագրի համաֆինանսավորումը կազմում է առնվազն 6 միլիոն ՀՀ դրամ: Նախագծերի տևողությունը 2 տարի է, սակայն ավարտից հետո դրանք կարող են ստանալ ևս մեկ տարվա ֆինանսավորում՝ արդյունքի առևտրայնացման նպատակով: Առևտրայնացումը կիրականացվի ՀՀ էկոնոմիկայի նախարարության կազմում ստեղծվող Տեխնոլոգիաների փոխանցման կենտրոնի միջոցով: Այս մեխանիզմը ոչ միայն նպաստում է գիտություն-բիզնես օղակի ձևավորմանը, այլև հնարավորություն է տալիս աջակցել գիտանորարարական ենթակառուցվածքների զարգացմանը:
- Հաշվի առնելով ռազմական արդյունաբերության կարիքները՝ կրկին արտահերթ անցկացվել է Երկակի նշանակության հետազոտությունների մրցույթ՝ Ռազմարդյունաբերական կոմիտեի հետ համատեղ: Նախորդ տարիների համեմատ ավելացվել է ֆինանսավորման երաշխավորված ծրագրերի քանակը (12 գիտական թեմա՝ 24 ամիս տևողությամբ):
- Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության մրցույթում կատարվել են փոփոխություններ. մրցութային շեմը հաղթահարողները մինչև

3 տարի տևողությամբ կարող են ստանալ ամսական մինչև 150 000 ՀՀ դրամ աշխատավարձ: Վճարվում են նաև նրանց ղեկավարները՝ մինչև 50 000 ՀՀ դրամ: Ֆինանսավորման են երաշխավորվել 29 գիտական թեմաներ 12-ից մինչև 36 ամիս տևողությամբ: Ծրագրի ընթացքում սահմանված են փուլային վերջնարդյունքներ՝ հրապարակումների և անգլերենի իմացության մակարդակի մասով:

- 2021 թվականից ՀՀ գիտության կոմիտեի կողմից ներդրվել է Գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացման կենտրոնի ստեղծման ծրագիրը, որի շրջանակներում իր գործունեությունն է վերսկսել «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» (նախկինում՝ «Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն») հիմնադրամը, որի նպատակն է իրականացնել գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտներում միջազգային կառույցների, այդ թվում «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարությունների Եվրոպական Միության շրջանակային նոր ծրագրի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերում ՀՀ գիտական կազմակերպությունների, բուհերի և առանձին գիտնականների ու գիտական խմբերի մասնակցության ակտիվացմանն ուղղված միջոցառումներ՝ տրամադրելով համապատասխան խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն:

2. Գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման նպատակով մրցույթների կազմակերպում

Մրցույթը	Հայտարարման ժամկետը	Ներկայացված հայտերի քանակը	Ֆինանսավորման երաշխավորված թեմաների/ծրագրերի թիվը	
2020 թ. հայտարարված մրցույթների արդյունքների ամփոփում				
«Արցախի հետ համագործակցության ծրագիր-2021» մրցույթ	2020 թ. սեպտեմբեր	5	5	Ֆինանսավորումն սկսվել է 2021 թ. ապրիլից
ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳՀ-ՀՀԲՀՀ-2021» մրցույթը:	2020 թ. դեկտեմբեր	31	16	Ֆինանսավորումն սկսվել է 2021 թ. սեպտեմբերից
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի մրցույթ:	2020 թ. դեկտեմբեր	332	232	Ֆինանսավորվել է 2021 թ. հոկտեմբերից՝ մինչև 3 տարի տևողությամբ, 2-5 կատարող ունեցող 232 թեմա (այդ թվում՝ 8 բողոքարկման փուլում)

2021 թ. կազմակերպված մրցույթներ				
Միջազգային մրցույթներ				
ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայ-գերմանական համատեղ թեմաների աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԳԿՀԴՆ - 2022» մրցույթ	հուլիս	10		Հայտերը փորձաքննության փուլում են
ՀՀ գիտության կոմիտեի և Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի կողմից անցկացվող՝ կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված համատեղ գիտական ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԲՀ ԳՏՊԿ - 2021» մրցույթ	հունվար	12	6	Ֆինանսավորումն սկսվել է 2021 թ. հուլիսից
Ներպետական մրցույթներ				
Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և (կամ) թեմաներում ընդգրկված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթ	հունվար	382	154	Հավելավճարները տրամադրվում են 2021 թ. հունիսից՝ մեկ տարի ժամկետով
«Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2021» մրցույթ	մարտ	43	29	Ֆինանսավորումը տրամադրվում է 2021 թ. հոկտեմբերից
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական սարքերի և (կամ) նյութերի ձեռք բերմանն ուղղված գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ	մարտ	52	24	Դրամաշնորհները տրամադրվում են ԵԳԱԾ-ի շրջանակներում՝երեք երիտասարդ գիտնականներից կազմված խմբերի՝ 12 ամիս տևողությամբ
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում առաջատար հետազոտությունների աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ	ապրիլ	94	49	Ֆինանսավորումը տրամադրվում է 2021 թ. հոկտեմբերից՝ մինչև 5 տարի տևողությամբ, 6-7 անձից բաղկացած 49 գիտահետազոտական խմբերի:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ	ապրիլ	22	16	Ֆինանսավորումը տրամադրվում է 2021 թ. սեպտեմբերից, 36 ամիս տևողությամբ, 4-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի:
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ	մայիս	18	12	Ֆինանսավորումը տրամադրվում է 2021 թ. օգոստոսից, 12 կամ 24 ամիս տևողությամբ, 4-6 անձից բաղկացած գիտական խմբերի
Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի հայտարարություն	հունիս		28	28 հայտով ներկայացված սարքերի և սարքավորումների ձեռքբերման համար15 կազմակերպությունների կտրամադրվի ընդհանուր առմամբ 1 միլիարդ 354 միլիոն ՀՀ դրամի աջակցություն:
Մրցույթ՝ գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոնի ստեղծման և պահպանման համար	հուլիս	1	1	Մրցույթի շրջանակներում իր գործունեությունն է վերսկսել «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» հիմնադրամը
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի հայտերի մրցույթ	հուլիս	15	13	Ֆինանսավորումը տրվում է 2021 թ. հոկտեմբերից՝ 4-6 անձից բաղկացած խմբերի՝ 24 ամիս տևողությամբ, այնուհետև՝ ևս 12 ամիս երկարացման հնարավորությամբ
Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում տպագրված հոդվածների համար երիտասարդ գիտնականներին հավելավճարի տրամադրման հայտերի ընտրության մրցույթ	սեպտեմբեր	54	41	Մրցույթը կազմակերպվել է ԵԳԱԾ շրջանակներում
Մրցույթ՝ գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացմանն աջակցության կենտրոնի ստեղծման և պահպանման համար	դեկտեմբեր			Հայտերն ընդունվում են

3. Ընթացիկ գործունեություն

3.1. Կազմակերպվել է Արցախի գիտական կենտրոնից ներկայացված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական թեմաների 2021 թ. թվով 17 հայտերի գիտական փորձաքննությունը, որի արդյունքները տրամադրվել են Արցախի Հանրապետության ԿԳՄ նախարարին:

3.2. Կազմակերպվել է 2020-2021 թթ. հայտարարված մրցույթների հայտերի առցանց հավաքագրումը, գիտաչափական վերլուծությունը և գիտական արդյունքների նույնականացումը: Իրականացվել է 1039 հայտի գիտական փորձաքննություն:

3.3. Շարունակվել են Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական արդյունքների ներմուծման առցանց համակարգի (www.orgs.scs.am) մշակման աշխատանքները: Կայքը նախատեսված է առցանց ռեժիմով բոլոր մակարդակներում՝ անհատ հետազոտողից մինչև գիտական կազմակերպություն, գիտական գործունեության արդյունավետության մշտադիտարկման համար: Համակարգի շնորհիվ ստեղծվում է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ լիարժեք բազա, որը հիմք է հանդիսանալու դրանց գործունեության արդյունավետության գնահատման և կատարողականի վրա հիմնված ֆինանսավորում իրականացնելու համար: Համակարգը նախատեսվում է ներդնել մինչև 2022 թ. մայիս:

3.4. 2021 թ. մայիսի 13-ի N 760-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների 2021/2022 ուսումնական տարվա դոկտորանտուրայում ձևակերպվելու տեղերը և դրանց բաշխումը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

3.5. Իրականացվել է 2021 թ. ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերում և թեմաներում ընդգրկված 93 կազմակերպությունների և բուհերի աշխատակիցների վերաբերյալ տվյալների հավաքագրում և մշակում, ստեղծվել է համապատասխան շտեմարան, որը 2021 թ. դեկտեմբերի դրությամբ պարունակում է 5853 գիտական և վարչական աշխատակիցների մասին տվյալներ: Գրանցված գիտաշխատողների թիվը 3815 է, որից դոկտորի գիտական աստիճան ունեն 609-ը, իսկ թեկնածուի գիտական աստիճան՝ 1847-ը, վարչական աշխատակիցների թիվը 1417 է, ճարտարագիտատեխնիկական աշխատակիցների թիվը 621:

3.6. Ստեղծվել և վարվել է 2021 թ. գիտական աստիճանի համար հավելավճար ստացողների շտեմարան, որը 2021 թ. դեկտեմբերի դրությամբ պարունակում է 503 դոկտորի և 1504 թեկնածուի մասին տվյալներ:

3.7. Կազմակերպվել է Կոմիտեում քաղաքացիների ընդունելությունը (175 քաղաքացի, այդ թվում 148-ը՝ նախագահի, 27-ը՝ նախագահի տեղակալի մոտ): Քաղաքացիներից ստացվել է 43 դիմում, բողոք և առաջարկություն, բոլորին տրվել է պարզաբանում:

4. Միջազգային համագործակցություն

4.1. 2021 թվականի նոյեմբերի 12-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ԵՄ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարությունների շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը, որն ուժի մեջ է մտել 2022 թ. փետրվարի 11-ից:

4.2. 2021 թվականի օգոստոսից իր գործունեությունն է վերսկսել ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1034-Ն որոշմամբ հիմնադրված «Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն» հիմնադրամը (այժմ՝ «Գիտական և նորարարական գործընկերությանն աջակցման կենտրոն» հիմնադրամ): Հիմնադրամի գործունեության հիմնական նպատակներն են՝ գիտության, կրթության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտներում միջազգային կառույցների կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերին ՀՀ գիտական կազմակերպությունների, բուհերի և առանձին գիտնականների ու գիտական խմբերի մասնակցության ակտիվացմանն ուղղված միջոցառումների իրականացումը՝ ծրագրերի մասին համապատասխան տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և խորհրդատվության տրամադրման միջոցով, ինչպես նաև «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարությունների Եվրոպական Միության շրջանակային նոր ծրագրին ՀՀ գիտական կազմակերպությունների և բուհերի մասնակցությանն աջակցությունը, ծրագրի ազգային կոնտակտային անձանց գործունեության համակարգումը, տեղեկատվական միջոցառումների կազմակերպումը և խորհրդատվությունների անցկացումը:

4.3. 2021 թվականին, գիտության ոլորտում միջազգային կապերի ընդլայնման նպատակով, ՀՀ գիտության կոմիտեն կապեր է հաստատել Էստոնիայի Հանրապետության Հետազոտությունների խորհրդի և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան ազգային գիտական հիմնադրամի հետ: Քննարկվել են համագործակցության հնարավորությունները և հեռանկարները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել «Հորիզոն Եվրոպա» ծրագրի ընձեռած հնարավորությունների շրջանակներում համագործակցությունը զարգացնելու, ինչպես նաև երկկողմ համագործակցության զարգացման համար քայլեր ձեռնարկելու շուրջ:

4.4. Ստորագրման փուլում է գտնվում «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Բնական պաշարների նախարարության երկրի արբանյակային հեռազննման կիրառության կենտրոնի միջև արբանյակային պատկերների կիրառման ոլորտում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիրը:

4.5. Տրամադրվել են կարծիքներ ԵՏՄ շրջանակներում մշակված և ընդունված հայեցակարգերի նախագծերի, գիտահետազոտական աշխատանքների իրականացման ծառայությունների ոլորտում համատեղ գործունեության ու վարչական համագործակցության մասին համաձայնագրերի և այլ իրավական ակտերի վերաբերյալ: Տրամադրվել են կարծիքներ ԱՊՀ շրջանակներում մշակվող փաստաթղթերի վերաբերյալ: